ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

«ՍԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի ապրիլի 12-ի №07/11.1/2729-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում ճառագայթող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի №15/5 հասցեում, որտեղ գործունեություն է իրականացնում «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն),

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի ապրիլի 14-ի №ՍԾ/34.2-Մ2-9/1176-2022 գրությանն ի պատասխան Ընկերությունը որևէ փաստարկ չի ներկայացրել,

գ) իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է Ընկերության կողմից առանց թույլտվության 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականու-թյունների տիրույթի օգտագործումը, Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 11-ի №201-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Ընկերությանը պարտավորեցրել է դադարեցնել առանց թույլտվության 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագոր-ծումը,

դ) Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 11-ի №ԱՍ/34.2-Մ2-9/1488-2022 գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է, որ Որոշման պահանջները չկատարելու և առանց

թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը շարունակելու դեպքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, Հանձնաժողովն իրավասու է կիրառել համապատասխան տույժ կամ տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով,

ե) Նախարարությունը 2022 թվականի հոկտեմբերի 18-ի №07/11.1/8626-2022 գրությամբ հայտնել է, որ 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում իրականացված հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի №5 հասցեում գտնվող՝ Ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» խանութի տարածքում հայտնաբերվել է առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բջջային կապի վերահաղորդակ,

զ) Հանձնաժողովը, դադարեցման վերաբերյալ որոշման ընդունումից հետո, առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի հոկտեմբերի 24-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի №ԳԲ/34.2-Մ2-9/3721-2022 գրությամբ,

է) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը Որոշմամբ դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո շարունակել է առանց թույլտվության 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթից 897.5ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 63-րդ հոդվածի 10-րդ մասը, «Հանրային ծառայություն-ները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու համար Ընկերությանը տուգանել 1 000 000 (մեկ միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:

3. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով ամրագրված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2022թ.